

## ԱՐՏԱՍԱՐՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Լոմբրոզօի լոգւածները կանանց անզգականութեան մասին, ամրոխի և պարլամենտարիսմի մասին, Հրւափակին Ամերիկան և Ռուսաստանը՝ Նիցշչն Վագնէրի մասին, Կրկեսապետ Ռէնց, Մոլտէի վշառակարանից, Ստատիստիկոս Բոդիօն Խտայիափ մասին, Անդլիական գաղթականութիւնների քաղաքական կազմը, Անդլիափ ելմտացուցը, Մարմարզական մրցումները Անդլիակում:

Խտայացի գիտնական Լոմբրոզօն ամիս չի անցնում, որ գիտնական աստանով մի նոր լուզիչ լոգւած չը տպի եւրապական ամսագրերում:

Fortnightly Review'ի<sup>1)</sup> մարտի տեստում՝ նա աշխատում է՝ հիմնելով թւերի վրա՝ մինչև այժմ կնոջ զգականութեան մասին մեր ունեցած կարծիքները եղաշրջել. Լոմբրոզօն ապացուցանում է, որ կինը թէ ֆիզիկապէս, թէ բարուապէս տղամարդուց պակաս զգականութիւն ունի.

«Մինչև այժմ կարծում էին, ասում է գիտնականը, որ կնոջ ուղեղը շատ է պակաս տղամարդու ուղեղից և միմիան նորերս են նկատել թէ այդ հաշիւը սխալ է արւած, որովհետեւ համեմատելիս ի նկատ չէր առնւած տղամարդու և կնոջ մարմնի ծանրութեան, տարիքի և հասակի տարերութիւնը և աւագէո՞ երնաց որ տղամարդու և կնոջ ուղեղի տարբերութիւնը շատ չնշին է.»

«Տարօրինակ է թում, շարունակում է Լոմբրոզօն, որ կնոջ ֆիզիկական և բարուական լատկութիւնների մասին չեն արւած մինչև աչժմ ճշգրիտ հետազոտութիւններ, կարծես թէ նա ապրում լինէր ոչ թէ մեզ հետ, ալ մի ուրիշ մոլորակի վրա.»

<sup>1)</sup> The physical Insensibility of woman (կնոջ ֆիզիկական անզգականութիւնը).

«Ես ինքս դիմել եմ Վերերի էստեղիօմետրին (զգալաչափ) և հարիւրից տեղի փորձերից եղբակացրել՝ որ (ի բայ առեալ ջանէլ օրիորդներին, որնց զգալականութիւնը վերին աստիճանի նուրբ է) զգալականութեան չափը և ցափ ըմբանողութիւնը ցուցամատների ծալրերում գրեթէ կրկնակի բութ է կանանց մօտ քան տղամարդկանց, Բարձր դասակարգերի կանանց մօտ դա է 2,0 միլլիմետր, իսկ մշակ կանանց մօտ՝ 2,6 միլլիմետր, մինչդեռ տղամարդկանցը է 1,6 միլլիմետր, Նիկոլ և Բալլէի արած նորագոյն փորձերից երեսում է, որ ընդհանրապէս կանանց հոտառութիւնն աւելի պակաս և թով է քան տղամարդկանցը»

«Ելեքտրական ալգոմետրի փորձերից երմաց, որ 50 մշակ կանանց մօտ ընդհանուր զգալականութիւնը 90 միլլիմետր էր և ցափ զգալականութիւնը 53 միլ., մինչդեռ 50 մշակ տղամարդկանց մօտ էր 94 և 34., ջանէլ տղամարդկանց մօտ 95 և 78, իսկ ջանէլ օրիորդների մօտ 91 և 70.

Բաւականաճաշով իւր փորձերի ցուցմունքներով՝ նա բերում է վկանութիւններ հաշակատր վիրաբոլիք թիլրոտի, որի ասելով՝ կանալք պահան զգալուն են և աւելի հեշտութեամբ ցաւեր տանող, կարլէ՛ի ասելով՝ կինը զարմանալի անզգակ է, կարծես վլրաբոլիքի դանակը ոչ թէ աղդ կնոջ մարմինն է կորոտում, առ մի ուրիշինքը. Զիորդան օ՛ի վկալութեամբ՝ երկունքի մէջ կինն աւելի քիչ ցաւ է գգում քան վախենում:

Ատամնաբոլժ Մարտինի ի ասելով՝ կինն աւելի արիւթեամբ և հեշտութեամբ է տանում ատամնահանութեան ցաւերը. իսկ բժ. Բելա՛ն ամելացնում է թէ տղամարդիկ աղդ դէպքերում աւելի լաճախ են ուշաթափում:

Բարովական զգալականութեան մասին խօսելիս—Լոմբրոզն առաջ է բերում Բալդակի խօսքերը, թէ կինը տղամարդուց ամելի շատ է խուսափում և վախենում անախորժութիւններից, բայց երբ սոքա տեղի են ու նենում աւելի հեշտութեամբ է դիմանում նրանց:

Թէ Փիզիկական և թէ բարովական զգալնութեան պակաս աստիւնին լինելն է, որ կինը աւելի երկարակեաց է քան տղամարդը Միմիան մինչև 20 տարեկան հասակը—կանալք շատ քիչով աւելի են մեռնում քան տղամարդիկ, Անուշետեւ 20 տարեկանից մինչև 50 տարին—կնոջ մահացութիւնը շատ է պակասում, Անվիճելի է որ կնոջ երկարակեցութիւնը չափ տեղի մնծ է քան տղամարդունը, և լուսաւած ան բանի մասին որ ինքնասպանների թիւը կանանց մէջ շատ և շատ պակաս է, եթէ ի նկատ առնւի կինոջ ֆիզիկական համեմատական թուկութիւնը և ծննդարերութեան ժամանակ եղած վտանգը—կինոջ երկարակեցութիւնն առվի ևս կ'որոշվի. և Լոմբրոզն հակւած է ապ հանգամանքը բացատրելու կնոջ պակաս զգալնութիւնով,

Բարովական կեանքի համար կինն աննպաստ պարմանների մէջ է, Աւիրաւ, զարմանալ պէտք է, թէ ինչպէս է զիմանում հպատակւած, լաճախ

հալածած և բարձի թողի արւած կինը—երբ նաև թառամում և անետանում է նրա գեղեցկութիւնը՝ Քանի քանիներին է վիճակած ու է ըստոր միակ և վերջնական նպատակ ու խմասն է կնոջ համար, նւազագում մարդում և կնոջ համար զործ է ածւում երկու չափա, երկու կշիռ, անչինչ որ աղամարդու համար մեղք չէ—կնոջ համար աններելի լանցանք է, ինչու կանաչք չեն կարողանում իրանց պահել ախտոր բռպէներին, Ագդ հարցին Լոմբրոզոն պատասխանում է ալպէս, աղամարդու ուղեղն աւելի շատ է ընդունակ ընդիմանալ զեֆիլսիտ, և կիսասեֆիլսիտ, երևոլթները քան կնոջ ուղեղը, և երկրորդ՝ որ միզրում կնոջ կրթութիւնն ալլ էր քան տղամարդունը և նպատակ ունէր զարգացնել զվասւորապէս չնորհալիութիւնն ու նագելիութիւնը փոխանակ արխութեան և ուժի, Վաղ թէ ուշ կանաչք ճանաչում են իրանց արտասուքի գօրութիւնը և լաճախ սովորում են նրան առաջ բերել պահանջւած ժամանակին,

Քանի քանի դիտնական փորձեր են եղել երբ կինը լալուց լնտոք հէնց խոկոն ծիծաղել է,

—Այն հանգատանքից, որ կինը հաշտում է և բազմակինութեան հետ և միակնութեան հետ, Լոմբրոզոն եղակացնում է որ դա ապացուց է մի լաւոնի աստիճանով կանանց Փիզիկական բթութեան և անտարերերութեան (բանուցիւ), Անա ալլ լողածի օտարուի եղակացութիւնը,

Ակնունեան անխոնջ Լոմբրոզոն զետեղել է Պարիզի անուլել Ռեվիլուրի մէջ մի ոչ պակաս հետաքրքրաշարժ լողած պարլամենտարիստ անգոնացուցիչ լինելու մասին, որ և կրում է հետեւեալ վերնագիրը՝ La foule révolutionnaire et le parlementarisme (լեզափոխական ամրութ և պարլամենտարիսմը), Անա ալլ լողածի օտարուի եղակացութիւնը:

«Փողովների բազմամարդութիւնը չի առաջ բերում լուսաւորութիւն և խմասութեան ամենաշատ չափար, ալլ ալս վերջինների արժանաւորութիւնը կախւած է աւելի պակաս խորհրդատուների թւից, Այն բոլոր խորհրդների, լանձնաժողովների և մասնաժողովների մասին—որոնք կազմում են ոչ թէ մի անհատի կամքի համաձան, ալլ հասարակաց ձախութեամբ—կարելի է ասել թէ իշխանութիւնը դանում է անպատասխանաւոների ձեռքում,

Այն պատերազմ չափարարող վճիռները, որոնք լավոնւում են պարլամենտական ժողովներում, աւելի շուտով են ընդունում ալլ ժողովի կողմից, քան մի անհատի կողմից, քանի որ ժողովի ամենալն մի անդամն ամբողջ պատասխանատութեան մի մասն է, միան ընդունում իւր վրա, խակ անհատը պատասխանատութեան ամբողջ ծանրութիւնը իւր վրա զգալով աւելի հակամէտ կը լինի դէպի խաղաղութիւնը, քան թէ խմասուններից կաղմած մի ժողով, Կնշապէս է ապացուցանում Լոմբրոզոն իւր աւստակէտը,

Աթաղաքական լանցանքների պատահական պատճառներից ամենազ-

բեղն է վարակիչ լափշտակումն, որ առաջ է գալիս հենց բազմամարդութեան ժողովականուցու և իրաւ շատ անգամ ապատամբութիւններն ուրիշ պատճառ չեն ունեցել, եթէ ոչ պատահական ժողովները մի լամանի վայրում (տօնավաճառ, տօն և ալճ) — մանաւանդ ամառը և եթէ ալդ ժողովները պալմանաւորմէլ են մի ընդհանուր քաղաքական դրումամբ<sup>1)</sup>.

ԱԱրավիսի դէպքերում հաստատակամ մարտու խօսքերն աննկուն կերպով, իրբն մի ներշնչումն ի վերուստ, ազդում, ներգործում են ամբոխի վրա, որ հակամէտ է դէպի նորութիւն, ունի վառ երևակալութիւն, հաւատ — բայց գրեթէ միշտ տգէտ է, Ակդ րոպէին՝ Պալիեղէի ասելով կատարում է մի տեսակ բարուական արբեցողութիւն, երբ առաջնորդողի (ԵՕՊԱԿԵ) օրինակին միանում է և փոխադարձ գրգռում Ամբոխն ինքն իրան աւելի համարձակ է զգում և կատարում անպիսի բաներ, որ առանձնապէս վերցրած, ոչ զբանական չէր առնիւ.

ԱՍրա բացատրութիւնը տալիս է Սեղելն իւր՝ օթանցաւոր Ամբոխը դրբի մէջ ասպէս. «Ամբոխը ներկալացնում է իրանով մի հող, որի վրա շատ հեշտութեամբ զարգանում է չար ու թեան միկրոս ըլ, իսկ բարութեան միկրոսը գրեթէ միշտ մնոնում է՝ ապրելու համար պալմաններ չը գտնելով».

ԱՍրա պատճառն ան է, որ նախ ամբոխը կազմւած է պէսպէս և իրար հակառակ տարբերից. գութ ունեցողների մօտ կանգնած են լինում անգութները և անտարբերները, շիտակ մարդկանց մօտ շրջմոլիկի կամ ոճրագործի մէկը. երկրորդ՝ ամբոխ կազմող մարդկանց բարի լատկութիւններն իրար ջնջում են փոխանակ միաւորելու և այս հանգամանքը կատարում է մաթեմաթիկական ծառութեամբ, քանի որ միջին թիւը չի կարող ամբողջ թվին հաւասար լինել կամ նրանից էլ մեծ, և քանի որ ամբոխի լատկութիւնների միջին թիւը կազմւած չի լինի նրա միմիակն լաւ լատկութիւններից, ալ և վատերից, և կ'ստացի մի միջին թիւ՝ հաւասար ամբոխի միջին լատկութիւններից.

«Ժողովի մի որոշումը կարող է հակառակ լինել ակդ ժողովը կազմող առանձնապէս վերցրած ամեն մէկի կարծիքին».

ԱՍրա օրինակները մենք տեսնում ենք՝ գեղարւեստական, դրական, արդիւնագործական լանձնաժողովների վճիռներում».

«Նորն են ներկալացնում երբեմն և քաղաքական ժողովները, երբ անպիսի որոշումներ են ընդունում, որոնք միանգաման ընդդէմ են ժողովի մէջ եղած մեծամասնութեան կարծիքներին և ցանկութիւններին».

Ակս առաջ է գալիս ան հանգամանքից որ ժողովների խմբումներում

<sup>1)</sup> Բոլոր կառավարութիւնները ճանաչել են ալս իրողութիւնը և միշտ աշխատել են ցրւել ամբոխը, որ ալսպէս թէ անպիս ժողովմէլ է մի որոշ բնազդմամբ».

բնաւորութիւնների ամենաալու և ամենաբարձր տիպարները—որոնք ստեղծել են դաստիարակութեան և կրթութեան չնորհիւ բարձր շրջաններում—չէ զօք անում են՝ չխելով միջին տիպարների հետ—տիպարների, որոնք լաստով են ընդհանրութեան, և վերջի վերջու լաղթող են հանդիսանում վերջինները, իսկ առաջինները մնում են ստերի մէջ. Անհատի բարի լատկութիւնները կորչում են նաև մի ուրիշ պատճառով. նա՝ ով բարի է, ողորմած է—համարձակութիւն չի ունենում իբր արդարիսի մէկը հանդիսանալ ամբոխի մէջ, որ մի գուցէ իրան վախիստ անւաննեն. Այս իրաւ գրգռւած ամբոխի մէջ շատերն իրանց համոզմունքի հակառակ կամ կ եց է կամ կ ու բչի են աղաղակում միմիավն վախից՝ զանազանւու, աչքի ընկնելու և կամ խօսքից անցնում են գործի՝ դարձալ ամբոխին իւր համամիտ լինելը ցող տալու համար.

«Բանիսը զօրութիւն և ովք են ունենում զիմաղրելու և գրգռւած ամբոխի հակառակ մի դրութիւն բանելու»

«Առաւար մեծամասնութիւնը զգալով հանդերձ թէ ինքը վասէ անում՝ հետևում է ամբոխի հոսանքին, Այդ մեծամասնութիւնը գիտէ որ հակառակութիւնը մի վտանգաւոր խաղ կը լինի իրանց կողմից. Ակաղիսի դէպքերում անհատի բարի լատկութիւնները խեղղւում են և լաղթում են չար կրքերը»

«Աւայ նաև մի ուրիշ և ամելի նշանաւոր պատճառ և դա է տապաւորութիւնների ու զգացմունքների վարակիչ լինելը, որ վտանգաւոր է զարձնում ամենաալ մի համախմբումն մարդկանց».

«Բացառական դէպքերում մարդկալին օրդանիամի ակս լատկութիւնն ստանում է սուր կերպարանք՝ դառնալով մի վարակիչ հիւանդութիւն և պայմանաւորում ոչ միայն կրաւորականութիւնը, որով մարդիկ լոկ հանդիսատեսներ են լինում գարշելի արարողութիւնների, այլ և նրանց ներդրծական դրութիւնը».

Թւում է սական, որ Լոմբրոզովի ակս հետաքրքրական մտքերը միակողմանի են. ընդունելով անզամ տպաւորութիւնների ու զգացումների վարակիչ լինելը՝ դժւար է ասել որ մարդկանց համախմբումները վեսակար են. չէ որ բարի գործերի համար վերովիշեալ վարակման սկզբունքը կունենալ և բարի հետեանքներ. և ինչքան որ մի ամբոխի միջին լատկութիւնները թող և բթացած լինին՝ եթէ տեղի ունենալ մի ազգասիրական, բարեգործական հրաւէր ամբոխի անդամներից մէկի կողմից—այդ հրաւէրը հրճանքով կընդունէի, ուրեմն և ամբոխի ցածր լատկութիւնները խեղղւած կը մնան. Քանի հարիւր հազար համախմբումբներ լաւ գործեր են կատարել՝ տեղելով զանազան ընկերութիւններ, հաստատութիւններ, ազգեր ազատել. Անա ակս տեսակէտից նախելով ևս ասացի որ Լամբրոզօ՛ի տեսակէտը միակողմանի պէտք է համարել. Խոկ ինչ վերաբերում է պարլամենտարիամին, այդ զիտողութիւնները գրեթէ զերօխ նշանակութիւն ունեն այն պատճառների

դիմաց, որոնք խօսում են նր ո օգտին և որոնք արտակալուած են քաղաքական նշանաւոր գրողների գրւածքներում:

—1861—65 թ. Ամերիկակին Հիւսիսավին և Հարաւալին նահանգների իրար հետ ունեցած արիւնահեղ պատերազմի ժամանակ սևամորթ ճորտերի ազատութեան պատճառով—եւրոպական պետութիւնները տեսակ-տեսակ միջամտելու ցոլցեր արին:

Անգլիան և Ֆրանսիան Հարաւալին նահանգների կողմն էին պահում, իսկ Ռուսաստանը հանգուցեալ Ալեքսանդր Ռ-ի ձեռքով ուղարկած նաւատորմիջով օգնեց Հիւսիսավին նահանգներին իրանց ձեռնարկութիւնը բաղթութեամբ վերջացնելու Հարաւալին նահանգների դէմ:

Ռուսիաի ալս պատժական միջամտութիւնը հիմք ու պատճառ դառւ այն վերաբերմունքին, որ տեղի ունեցաւ Ամերիկակում Ռուսաստանի սովեալ նահանգներին օգնելու գործում:

Հիւսիսավին նահանգներն աւելի մեծ սիրով վերաբերեցին դէպի գործը Հիւսիսա-արևելեան խոյոր ջրաղացատէրերի լատով լրագրի՝ Եղդար անոնառով խմբագիրն առաջինն եղաւ լորդոր կարդացողներից, Նավաստաբանում էր օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը, ասելով որ Ռուսաստանի սովի պատճառովն է որ ամերիկացիք իրանց հացը թանկ են ծախսում և մեծ կորուստ չեն արած լինիլ ամերիկացիք՝ եթէ իրանց առատ օգուստներից մի չնչին մասը հանելու լինեն ի նպաստ ռուս սովեալների, Նա դիմումներ արեց զանազան բարձրադիր անձինքներին, Շովալին մինիսաւրը լաբոնել էր իրան դիմած մի սենատորի թէ Ամերիկան միշտ կը վիշ Ալեքսանդր Ռ-ի վարուճքն ամերիկական ներքին երկառակութիւնների միջոցին, Ամերիկական սենատում առաջարկեց 100.000 դոլար <sup>1)</sup> նշանակել պետական գումարներից լոգուս ռուս սովեալների, Ակդ առաջարկութիւնն ընդունեց իսկուն,—բայց պաշտում այդ առաջարկութիւնը մերժուց զանազան պատրւակների տակ:

Ակս մերժումը մի մեծ զարկ տևեց հասարակական դժունութեան և ապա սկսեց մասնաւոր օժանդակութիւնների կազմակերպութիւնը, Ամերիկական Ակադեմիր Խաչին ընկերութեան նախագահունին՝ Կլարա Բարտոնը ծանօթացը լուազիրների միջոցով սովեալների դրութեան և օգնելու անհրաժեշտութեան հետ:

Պերճախօս եպիսկոպոս Ֆիլիպս Բրուկս' (Phillips Brooks) հրափրաց Նիու-Յորկ. սրա քարոզները լսելու համար ժողոված էր միշտ ահազին բազմութիւն:

<sup>1)</sup> Դոլար—մոտ 1 ռ. 75 կոպէկի:

Ֆիլադելֆիակի քաղաքագլուխը ժողով կազմնց քաղաքակին տան մէջ և առաջին նիստում վճռեց նաւեր վարձել հաց հասցնելու համար սովինալ նահանգներին Ֆիլադելֆիա քաղաքի հաշուով, International Navigation Company<sup>1)</sup> առաջարկեց Ֆիլադելֆիակի կոմիտեաբն իւր նաւերից մէկը (Խնդիանա) պակսեցրած գնով.

Բալդիմորա քաղաքը չուզեց եռ մետ Ֆիլադելֆիակից, Atlantic Transport Sine նաւագնացական ընկերութեան նախագահ Բեկերը՝ Եղ-դալի կարգադրութեան տակ զրեց «Միսսուրի» նաւը նմանապէս պակա-սեցրած գնով (20.000 դոլ. զանազանութիւնը իւր վրա առնելով).

Նիու-Յօրկի կենդրոնական երկաթուղարկն ընկերութիւնը լանձն առա-բոլոր կալարաններից ստացած հացը ձրի հասցնել նաւերը.

Ընդհանուր հոսանքին չեն մասնակցում միմիալն Նիու-Յօրկի բար-տիստները, որոնք հաւատացած են թէ Ռուսաստանին ացելած սովը մի պատիժ է Նախախնամութեան.

Ռուսաստանն ալցելած միսս Խղարելլա Հապգուդ ամերիկուհի զրոյն սկսեց մի շարք զասախոսութիւններ Ռուսաստանի մասին, լորդորելով նպաստել սովներին՝ ժողովւած գումարները հասցնելով կոմո և Տուստովին.

Մինչդեռ Վագների երաժշտութիւնը լաղթութիւններ է անում Գեր-մանիակից զուրա և ընդհանուր հետաքրքրութեան արժանանում, մինչ-դեռ Գերմանիակում՝ գերմանացիք, «անեղրի և խորհրդատորի» ալլ սիրահարները, շարունակում են երկրպագել Վագների երաժշտութեանը— հանդէս եկաւ գերմանացի մէկը, որ միանգաման ջախջախել կամեցաւ վագներականութիւնը. Այդ մէկն է—մնտափիղիկոս, փիլսոփիա, կրիտիկոս, բանաստեղծ և միներն ժամանակ երաժիշտ Նիցչէ<sup>2)</sup>, Նրա ասելով՝ Վագները մի հիւանդութիւն է. առ նրան ատում եմ, բայց միմիալն նրա երաժշտութիւնն եմ կարող տանել ու լսելո, ատում է նա.

Վագների գերիշխող զաղափարն է որ ըստ Նիցչէի տեսակ տեսակ ձևակերպութիւններով երեսմ է նրա բոլոր գրածքներում՝ Վագների ամենան մի օպերատում որ և է մէկն աղատում, փրկում է.

«Պարափակուի մէջ աղատում է մի սիրուհի (courtisane) մի բարի երիտասարդի ձեռքով, «Les maîtres chanteurs»-ի մէջ աղատում է մի գեղեցիկ մատաղ օրիորդ մի պերճափառ ասպետի ձեռքով,

Բայց, եղբակացնում է Նիցչէն, Վագների հետ համեմատած միւս

<sup>1)</sup> Միջազգակին նաւագնացութեան ընկերութիւն.

<sup>2)</sup> Nietzsche-la Cas Wagner.

երաժիշտները՝ երաժիշտներ չեն, նթէ նա սպանեց երաժշտութիւնը՝ մեղը ախքան իրանն է, որքան և ժամանակինը Նրանք, որոնք իրանց նրան դիմադրում են՝ ամլի անդէմ, անորոշ և անգործ երաժշտութիւն են հեղինակում խակ Վագներն ինքն է ամենը. Վագների անկումը կառարեալ է, բարեկօժար է, համոզած, օգտակատ:

—Քերլինում նորերս վախճանւել է Երնեստ Ժակոր Ռենց—հիմնադիր ցիրլի—որ և իւր անունն է կրում: Երլասարդ ժամանակ նա պարում էր թոկի վրա, մարմարագական հունարիներով շլացնում տանավաճառներում: Նա լաւանի զարձաւ իրը ձիեր սանձանարող, իրը և աննման մի ըմբիչ, անզուգական թռիչքներ անողի Ոչ ոք նրա նման չը գիտէր օգտակալ ուկլամներից: Նա թողել է միլիօնանոց մի ժառանգութիւն:

Կալրը և կալրուհին լալտնել են նրա ժառանգներին իրանց «ցաւակցութիւնները»:

—Երնելլի Մոլտկէի մահից ևսույ լուս են ընծաւում նրա լիշտութիւնները նրա մղած պատերազմների մասին:

Սրանցից երեսում է որ հանգուցեալ մարշալ հալրը՝ բնիկ պլուսացի, 13 տարի պլուսական զինւորական ծառալութեան մէջ մնալուց լիտոյ ընդունել էր դանիական հպատակութիւն (մի հանգամանք, որից օգտակալով շատերը սխալմամբ պնդում էին թէ մարշալը դանիացի է), Վերին աստիճանի հետաքրքրական է որ՝ երբ Ֆրիդրիխ թագաւորը նապոլէօն I գաշնակիցներից մէկն էր՝ մարշալ Մոլտկէի հալրը կռում էր պրուսացիների գէմ ֆրանսիացի մարշալ Դավու'ի հրամանատարութեան ներքու:

Առաջ բերենք մի քանի բնորոշող գծեր աղջ երեսելի գերմանացի զինւորականի մասնաւոր կեանքից: Դեռ 1891 թ. նա հպարտանում էր այն վերարկուն կրելով, որ վրան ունէր 1857 ին թագաժառանգին Անդլիա ուղեկցելիս: Նրկու ձեռք զգեստից ամլի երբէք չէր ունենում: 68 տարեկան նա սկսեց ժառեր տնկել կրազառ և չէր կշանում նրանց խնամելով:

Նրա սէրը զէպի երեխակը — անսահման էր. նա խաղում էր իւր ութ թռուների հետ երեխակի պէս՝ չը նալած իւր պատկառելի տարիքին, Բոլոր միջատներից նա ատում էր միան ճանճերին և նրանց հետ պատերազմում էր նոյն խակ մաշի սեղանի վրա՝ բաժակներ և ամաններ կոտրածլու րիսկով:

Իւր հիւրերին նա սիրում էր ցուց տալ իւր ծառատունկը և կառքով նրանց տանելիս ինքը սիրում էր նստել կառապանի մօտ: Պատանեկութեան հասակում նա ոտանաւոր էր լորինում: 90 տարեկան հասակում՝ նա թարգմանում էր գերմաներէնի անգլիացի բանաստեղծ՝ Թոմաս Մորին<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Thomas More.

Նրեկոները նա սիրում էր մի երկու երեք վիտախ թղթախաղ խաղալ, բայց միշտ անհերթ սխալներ գործելով նոր ասելով թղթախաղը նրան հանգստացնում էր և այդ զրադունքին նա իրաւ նվիրում էր ոչ միայն զիւզական կեանք վարելիս, ալև նաև Վերսալի ոմբակոծութեան օրերին, Մոլոկէն վախճանեց 24 լուսւարի 1891. նրա վիշտութիւնների մի պղակը՝ «Մխիթարական մտքեր հողեղն կեանքի և կափսենական կեանքի ակրն-կալութեան մասին»՝ ստորագրուած հոկտեմբերի 1890 թ. մնձ զարմանք պատճառեց ամբողջ Գերմանիակառամ՝ նոր լուսով լուսաւրելով մարշալնու.

Ահա նրա վիշտափակական մտքերից մի քանիսը.

«Բանականութիւնը չի ճանաչում ոչ մի հեղինակութիւն և ինքն անպաման իշխող է. Երբ ու տառեւ<sup>1)</sup>.

Մատառող խելքը թափառում է անսահման հեռաւորութիւնների մէջ, ուր փազլում են աստղերը. նա որոնում է ամենախսաւար կեանքերի մէջ բատակը, առանց սրան գտնելու. ոչ մի տեղ սահման, ալլ ամենուրեք միենուն կանոնը՝ աստածակին մտքի ալդ ուղղակի արտակալութիւնը.

Իրաւ է բանականութիւնը չի կարող ըմբռնել իրերի ծագումը, բայց ոչ մի տեղ նա չի հակասում այն կանոնին, որ առաջնորդում է ամենին, բանականութիւնը և երկրիս կանոնը միանման են և նոցա ազրիւրը մի-պէտք է լինի. Մինչեւ անգամ եթէ որ և է ասեղծագործութեան անկատարելութիւնը բանականութեանը հեռացնում է ճշմարտութեան ճանապարհից, անու ամենանիւ ճշմարտութիւնն է նրա միակ նպատակը.

Քրիստոնէութիւնն աշխարհը բարբարոսութիւնից բերել հասցեն է քաղաքակրթութեանն. նրա դարեւոր ջանքերը ոչնչացրին ստրկութիւնը, աղնացրին աշխատութիւնը,

Մենք կարող ենք ընդունել հաւատի հանգանակն անպէս՝ ինչպէս ընդունում ենք մի հաւատարիմ ընկերոջ հաւատափներն առանց նոցաքննելու, բայց բոլոր դաւանութիւնների կորիզը նրա ուսուցանող բարուականութիւնն է և քրիստոնէական բարուականութիւնը՝ ամենամաքուրը և ամենապարզերն է.

Սակայն ոմանք ուսերը վեր են քաշում բարուականութեան մասին խօսելիս. աւելի էական են համարում ձեզ, որի տակ նա ներկայանում է, ևս վախ եմ կրում մի գուցէ շօշափելիք (lachaire) սիրահար նախանձախնդիրները, կամենալով բռնի ընդունել տալ հաւատն առանց համոզել կարողանալու, վերջ ի վերջու զուրա քչեն քրիստոնեաներին եկեղեցիներից.

Ամենան մի անկեղծ աղօթք, լինի նա ուղղած Բուզգակին, Ալլահին թէ Սհովակին, չէ որ հասնում է միենոն Աստուծուն՝ քանի որ ադ-

<sup>1)</sup> «Ակնու ամենանիւ նա (երկրագունդը) պտըտում է (մահան դատապարտած Գալիլէի խօսքերը գլխահատ լինելու բոպէին).»

արիան մէկն է. Արդեօք մալբը չէ լսում ճիշը երեխալի՛ ինչ լիզւով որ սա արտասանելիս լինի նրա անունը:

Խիդճն աճ անկացառ և անսխալիկան դատաւորն է, որ քարոզում է նոյն բարուականութիւնը թէ քրիստոնեալին, թէ հրեալին, թէ կրապաշտին և թէ վալրենիներին Քաղաքակրթութեան նաև ամենասոր աստիճանների վրա գտնւող ազգերի մէջ բարի և չարի գաղափարները նոյն են, ինչ որ մեզանուա, Նորքա ևս չար են անւանում անհաւատարմութիւնը, զաւաձանութիւնը և խարէութիւնը և սուրբ են համարում զաւակների ու ծնողների մէջ եղած կապը...

Մոլտէ՛ն հաւատում էր Աստծոն և լավտենական կեանքին,

—Նորերս լուս տեսած մի գրքից<sup>1)</sup> երեսում է, որ առաջին շարաթաթերթը հրատարակել է Վիեննապում 1615—1616 թ., այնուհետև Ֆուլդա քաղաքում 1619, Էրֆուրտ քաղաքում 1620. Անտմրտէն քաղ. 1626 և Ֆրանսիապում 1631. Այս վերջինիս հիմնադիրը, որ և բարոնի էր իր կանոնատր, խելացի և կենդանի ռուպէ խմբագրող մէկը, էր Տէօֆրաստ Ռենդօ՛ն, որի վշատակը լաւբրժացնելու համար մտադիր են մի արձան դնել Պարիզում:

---

Անցեալները մի գիրք է հրատարակել, որ սոսկ թերով պատկերացնում է այն փոփոխութիւնը, որին ենթարկել է Խոտալիան—իւր ազտութիւնը և միութիւնը ձեռք բերելուց՝ այն է 1861 թվից վետով

Ազդ գրքի հեղինակը՝ Լ. Բոդիօ՛ն<sup>2)</sup> է, որին կոչում են «Թւանշանների թագաւորու»:

Խոտալիակի բնակիչների թիւը ներկարում համար է 31 միլիոնի, քնակիչների աճումը հաւասար է հազար հոգու վրա 10—13 հոգի տարէնը, ասել է նոյնքան, որքան Անգլիակում, Գերմանիակում և Շեքսբրիակում, մինչդեռ Ֆրանսիակում մեռնողների թիւը 1890-ին գերակշռում էր ծնունդների վրա. Գաղթականութիւնը հաւասար է 3,88%/<sub>0</sub>, մինչդեռ Ֆրանսիակում դա միանգամաճ անծանօթ է, Խոտալիակի առողջապահական դրութեան լաւանալը երեսում է հասնեալից. 1888 թ. տենդից (Malaria) զո՞ւ էին գնացել 21.033 հոգի, իսկ 1890՝ 15.624 հոգի, ծաղկից մեռել էին 18.110, իսկ 1890—7.210 հոգի.

Արագի գործածութիւնը Խոտալիակում չի տարածւած նման միւս երկրների, Սպիրտակին խմիչքների գործածութիւնից (ալկոօլիզմъ) մեռել

<sup>1)</sup> Geschichte der Wiener Journalistik bis 1848. von Zenker.

<sup>2)</sup> L. Bodio. Di alcuni indici del movimento economico in Italia. 1891.

Ան Խոտալիառում 14 հոդի (1 միլիոն հոգուց), մինչեւ Պրուախալում 22, Քերշնում 51, Անդլիալում 54, Շևեցիալում 66.

Խոտալիան հրատարակեց 6—12 տարեկան երեխաների ուսումը պարտաւորեցուցիչ, նա տարեկան 3 միլիոն լիրա <sup>1)</sup> ազդ նպատակի համար տալիս է անկարող համարներին: 1862 թ. տարրական ուսում էին սուանում 1.008.674, իսկ 1888-ին 2.307.982: Անդրագիտ նորակոչների տոկոսը պակասել է 52%—ից՝ 42%, Մինչեւ նույն ազդ տոկոսը հաւասար է Ֆրանսիակում՝ 9,5%, և Գերմանիակում նույն իսկ 1% պակաս, իսկ 1) Աւստրա-Հռոմեարիակում 2.—36%.

Խոտալիան տարեկան մախում է տարրական ուսումի վրա 62 միլ. լիրա, ասել է մի հոգուն 2 լիրա: 1887 թ. Ֆրանսիան մախել է նույն բանի վրա 173 միլ. ֆրանկ, Շվեյցարեան 18 միլ. Բելգիան 27 միլ. և Պրուախան 120 միլ. մարդ:

Միջին կրթութեան վրա Խոտալիան մախել է 1889 թ. 22.306.534 լիրա և ուսանողների թիւը եղել է արքունական գիմնազիաներում և լիցեններում 13.857 հոգի:

Բարձրագույն ուսում ստանում էին 1867 թ. 11.063, իսկ 1889 19.539 հոգի:

Խոտալիառում գորութիւն ունեն 21 համալսարաններ, որոնցից 17 արքունական են, իսկ չորսը մասնաւոր և քաղաքալին ընկերութիւնների:

Խոտալիառում գործում են մօտ 22 հազար բարեկործական ընկերութիւններ, որոնց գրամագլուխն է մօտ 2 միլիարդ <sup>2)</sup> լիրա:

1889 թ. գորութիւն ունի 4.898 փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, որոնցից 92-ը մշակների ընկերութիւններ, 161 արհեստաւորների, 208 գիւղական, 681 սպառողների, 69 ընկերութիւն մշակների համար տներ կառուցանելու:

Այս վերջին տեսակի ընկերութիւնները շատ են գնահատւած և նոքագործում են այս եղանակով: Քանի որ տոնը շինուում է ընկերները վճարում են շաբաթական մօտ 2 ֆրանկ <sup>3)</sup> ընկերական գանձարանին, նրա շինուած են լինում բաւականաչափ սենեակներ՝ վիճակ են գցում և բախտաւորները իսկուն և եղած տեղաւորում են եղած ընակարաններում: Տան շինութիւնը շարունակում է մինչև որ բոլոր անդամները սենեակներ են տուանում, իսկ դրա համար բոլոր անդամները մինչև ազդ ժամանակ շարունակում են իրանց անդամավճարը:

Մարդասպանութեան կողմից Խոտալիան առաջնակարգն է եւրոպա-

<sup>1)</sup> 1 լիրա=1 ֆրանկ:

<sup>2)</sup> Միլիարդ=1000 միլիոնի:

<sup>3)</sup> Աքմենան կուրսով մօտ 80 կոպ.

կան պետութիւնների մէջ, 1889 թ. Խոտալիալում սպանութիւն է եղել (100 հազար հոգու վրա) 8,05, մինչդեռ Ֆրանսիակում—1,46, Աւստրիա-լում—2,16, Գերմանիակում—0,92, Անգլիակում—0,40, Իրլանդիակում 0,85. Սական, ամելացնում է, Բողոքն 160, մարդասպանութիւնից Խոտալիալում տեղի են ունենում 35՝ վրէժինդրութիւնից (հոչակաւոր vendetta), 19՝ խոփշտակութիւնից (զառալչկաօստե), 10՝ սէրից:

Մինչդեռ Ֆրանսիալում սպանութիւնն աւարառութեան նպաստակոյ կազմում է 26,05%, Խոտալիալում նոյնը հաւասար է 15,7%.

Ցանած հողի տարածութիւնը 1890 թ. Խոտալիալում էր մօտ 2 միլիոն հեկտար: Դիւլզական արտադրութիւնը (ցորեն, կտաւատ, միրգ, զինի, ձէթ, բոֆոժ, թամբաքու և ալլն) գնահատում էր մօտ 3 միլիոնը 257 միլ. լիրա: Բացի դրանից՝ անտառներից նկամում 88 միլ. և մօտ 1.179 միլիոն ծախսած տաւարից կաշուց և ալն:

Մինչդեռ ածովիը սպառում էր Խոտալիալում տարիներ առաջ մի-միան 800.000 տոնն<sup>1)</sup>, ներկագումս աղդ թիւը հասել է 5 միլիոն տոննիւ Հաշւած է որ Խոտալիալ բոլոր արդիւնաբերող ուժերը հանում են 756.502 ինդիկատորական ոդին:

Խոտալիալում հովագործութեամբ պարապում են 48.980 մշակներ: 1890 թ. տացել է՝ հանքեցից 54 միլիոն լիրա, բովագործարաններից (մետալուրգիական) 115 միլիոն լիրա, ածխահանքերից 100 միլիոն լիրա և աղահանքերից 44 միլ. լիրա: Ակա տեսակի արդիւնագործութիւնը մի մշակի վրա միջին թույլ ընկնում է Խոտալիալում—1.093 ֆր., Ինգլիակում—1727 ֆր., Ֆրանսիակում—2.398 ֆր. և Անգլիակում—2.586 ֆրանկի: Մի-շն թույլ մշակի վարձը 2 ֆրանկից 4 ֆ. է:

1889 թ. Խոտալիալ նաւատորմիջը բազկացած էր 279 շոգենամբերից, 182.249 տոնն բարձելու կարողութեամբ և 6.442 կավմաւոր նաւերից 642.225 տոնն բարձելու կարողութեամբ Բացի դրանից՝ ձկնորսութեամբ պատապում են 19.387 նաւակներ միջին թույլ 2½—3 տաննանոց:

Երկաթուղարքն գիծը հասել է ներկալում 12.878 կիլոմետրի, Երկա-թուղարքն զուտ արդիւնք հաշըստում է՝ Խոտալիալում 2%, Ֆրանսիակում—3.69%, Գերմանիակում 5.35% և Անգլիակում 4.21%:

1890 թ. Խոտալիան վճարեց 159.414.891 լիրա իրր տոկոս իւր արած պարտքերի:

1885 թ. Խոտալական ելմտացուցը փակւած էր 4 միլիոն ամելորդ մի գումարով, 1886 թւից երբ Խոտալիան սկսեց միծ պետութեան դեր խաղալ և զաշնակցութիւններ հաստատել միջին եւրոպական պետութիւնների հետ՝ աղդ ժամանակից նրա ելմտացուցը միշտ մի բաց (Ճօնպիտէ) էր ունենում, որ 1889 թ. հասել էր 234 միլիոն լիրակի:

<sup>1)</sup> Տոննը=1000 կիլոգրամի, իսկ 16,4 կիլոգր.=1 ֆութ.

Ազգ պարտք արած փողերով խտալիան սպառազինւց և ակմ ունի  
712 հազարանոց մի դօրք (1.288.370 արձանագրւած դօրքի ընդհա-  
նուր գումարի մէջ)։

Համեմատութեան համար դնենք ակսեղ միւս երկրների դօրքերի թւե-  
րը. Ռուսաստանն ունի 2.039.606 ռազմական (боевая) դօրք պատերազմի  
ժամանակ, Ֆրանսիան—1.594 հազարանոց դօրք, Աւստրիան—1.260.000,  
Գերմանիան 1.437.514 և խոալիա 712.000.

Խոալիայի նաւատորմիով բաղկացած է, բացի 127 մինակիրներից  
(MINНООСКА), 22 զրահաւոր նաւերից, որոնցից 11-ը զինաւորւած են ազնապիսի  
թնդանոթներով, որնք կարող են թափանցել 70—90 սանտիմետր հաս-  
տատութիւն ունեցող զրահ, 1 վերջով, թողիօ'ի առելով, խոալիան հարստացել  
է ալս չափով։

1875—1880 նրա մասնաւոր հարստութիւնը դնահատում էր 45 մէ.

#### Դիարդ:

1880—1885 թ.—51.1 միլիարդ և

1880—1890 թ.—54.4 միլիարդ լիրա կամ ֆրանկ։

—Պաօօ Մոնակացցափի խոստացած գիրքը, թէ սինչպէս պէտք է  
կին առնելը<sup>1)</sup> նորերս լուս տեսաւ Յարգկլի զիտնականը նոր բան չասե-  
լով հանդերձ՝ կրկնում է շատ ճշմարտութիւններ, որոնք խոկապէս արժանի  
են կրկնւելու Օրինակի համար, նախ պէտք է լինի սէր և ապա պսակ,  
չը պէտք է ամուսնանալ ոսկու քաղցից. սիրահարւած մէկը լաւ կանի  
եթէ մի թիթե ճանապարհորդութիւն անի իւր սէրը լավանելուց առաջ,

Ամուսնութեան կողմնակից լինելով հանդերձ՝ նա ակնարկում է շատ  
գժւարութիւնների և խոչնդուների վրա՝ ամուսնների հոգու, մարմնի և  
բնաւորութեան մէջ մի համերաշխութիւն կաչացնելու և ներդաշնակութիւն  
տառաջ բնրելու նկատմամբ, անպէս որ կին առնելու արհեստը մնում է  
էլի չը լուծած և դժւար իրականացնելու մի արհեստ։

Փոքրիկ Մեծ Բրիտանիան իւր անսահման գաղթականութիւններով  
և կոլոնիաներով զրաւում է իւր վրա ամենքի լուրջ ուշագրութիւնը. և իրաւ  
ինչպէս է կարտղանում մի երկիր՝ 300.000 քառ. կիլոմետր տարածու-  
թեամբ և 35 միլիոն բնակիչներով կառավարել անքան ալացեղ ազգեր,  
որոնց բնակատեղին հաւասար է ամբողջ տիեզերքի գրեթէ հինգերորդա-  
կանին. Ալս խնդրին վերաբերեալ մի նոր<sup>2)</sup> ուսումնասիրութիւն պար-  
զում է մի քանի կէտեր։

<sup>1)</sup> L'arte di prendere moglia (կին առնելու արհեստը)։

<sup>2)</sup> De L'Empire colonisé anglais par A. Mills.

Անգլիակից կախում ունեցող 56 կոլոնիաները բաժանում են 3 կարգի։ Առաջին կարգում ամենաստար թուվ պատկանում են այն կոլոնիաները, որոնք կառավարում են մետրոպոլիակից ուղղակի նշանակած ազնատուութիւնը և որոնք ծառարար են կամ դինուրական նպատակի կամ ծովալին կալարանի և կամ մթերքի և պաշարեղէնի ամրաբանուցների։ Սրբորդի կարգին պատկանում են նրանք, որոնք մասամբ միան մասնակցում են իրանց գործերի տնօրինելում։

Տրբորդի կարգին պատկանում են նրանք, որոնք վակելում են ինքնավարութիւն իշխանական բոլոր լատկանիշներով և որոնք պատասխանատու են իրանց self government (ինքնավարութիւն) համար, Ամելի որոշ ասած։ 1) Նրանք որոնք խնամքի տակ են (Հնդկաստանը), 2) Նրանք, որանք երկրորդ աստիճանի վրա են և 3) Նրանք, որոնք ընդունակ են կառավարելու առանց օգնութեան, և խորհրդին կանագա, Աւտորալիա և Կապը Հարաւալին Ամերիկակրում։

Զանազան ժամանակներում՝ կառավարելու 3 կարգեր են առաջարկւած։

Առաջին հեղինակը պատկանում է լորդ Roseベtterey'ին, Դա է Tederation Impériale'ը (կալսերական դաշնակցութիւն), որի հիման վրա— կամերութեան բոլոր պետութիւնները իրար մէջ պարման են կապում ընդհանուր շահերի պաշտպանութեան համար, Բոլոր ապագիսի կանառները (Հնան Միացեալ նահանգներին 1776—1787 և Շվեյցարական կանոններին մինչև 1848) կ'ուղարկէին իրանց ներկալացուցիչներին որոշած կենդրոնական ժողովատեղը, ուր կը վիճէին պետական (imperial) գործերի մասին, Այս դէպքում Անգլիակի իրա նշանակութիւնը կը լինէր շատ աննշան։

Տրբորդի եղանակի առաջարկողն էր Charles Tupper, Այս եղանակի հիման վրա—կենդրոնական ժողովատեղին պիտի ուղարկէին միաձայն պատգամատու 3 մոծ գրուպպաներից (Ամերիկա, Աֆրիկա, Աւստրալիա), որանք ձախ կ'ունենալին միան պետական վարչութեան գնուելում։

Ոչ առաջին և ոչ երկրորդը չեն ընդունել, գործադրում է Յուր եղանակը որ ահա 50 տարի է արդէն լաջողութեամբ գործադրում է, Դա պատասխանատու կառավարչութիւնն է—վերանորոգւած 1840 թ. Կանադակում։ Ազատութիւն և ապահովութիւն—ահա սրա երկու լատկանիշները։

Անգլիան շատ լաւ է ըմբռնել այս եղանակի առավելութիւնները։ Տա ընաւ չի խառնում ներքին խնդիրների մէջ և ուղղութիւնն է տևել միմիան արտաքին քաղաքականութեանը։

Կոլոնիաները իշխան են ներքին գործերում, և վակելում են քաղաքական, դինուրական և տնտեսական ազատութիւն։ Նրա պարլամենտը բաղկացած է երկու ատեաններից (Chamhres), որոնք օրէնքներ են տալս երկրին՝ նման Անգլիական Westminster-ի պարլամենտին։

Դրաից նա պաշտպանւած է ամենալին շարձակումից. անգլիական կողունակավագի վրա շարձակուողը շարձակուում է Անգլիակի վրա. Բարձր իշխանութիւնը փոանդի դէպքում պատկանում է թագուհու ներկալութիւնը կողոնիակում և ամենալին մի կողոնիակի պարտականութիւնը Անգլիական կառավարութեան ներքու դնել պահանջած զօրքը, որ գործ կը դնի պիտութեան որ և է նպատակի համար, ահա այն երկու միջոցները, որոնցով պակմանաւորւում է Միարոպսիակի իշխանութիւնը:

1867թ. Արքիսինիակի թէոգորոս նեգուչը (թագաւորը) Վիկտորիա թագուհու մեռքն էր ուղել. ծագեց պատերազմ և Հնդկաստանից բերած զօրքերով տաղթմաց նեգուչը և սպանեցի. Աւստրալիակից զօրք բերաց Արքի Փաշակի դէմ կռւմու համար Սգիպատուում. Նորագոյն օրինակը Նոր Ներկուում պատահած դժուութիւններն են անդական վարչութիւնների կողմից ընդդէմ Գրանսիացինների ձկնորնութեան. Խակովն Անգլիան միջամանց իւր կողոնիակի կողմից և գործը հաշտութեամբ վերջացաւ:

—Ապրիլ 11-ին Գոչէնը ներկալացրեց 1891-92թ. Անգլիակի պետական ելմտացոցը և գալ 1892-93թ. Նախահաշիւը. Անցեալ տարւակ ելմտացոցից երեաց որ մուտքից համելով երքը՝ մնացել է մի ամելորդ գումար 1.067.000 ֆունտ տաերլինգ<sup>1)</sup>. Աւելորդ մի գումար սպասում է և 1892-93թ. Նախահաշւոյ բաց միմիալն 224.000 ֆունտ տաերլինգ:

—Ապրիլ ամսին տեղի ունեցան Լոնդոնում Օկսֆորդի և Կեմբրիջի համալսարանականների սովորական matche (մրցումը). այս նաւազնացական և մարմնամարզական մրցումները տեղի են ունենում ամենալին տարի և մեծ հետաքրքրութիւն պատճառում հասարակութեան:

Նաւազնացական մրցումները կատարուում են Տեմզա գետի վրա՝ 4½ մղոն<sup>2)</sup> տարածութեան վրա. Օկսֆորդի ուսանողները հագնաւած են վնում միշտ մութ կապուտ, իսկ Կեմբրիջի ուսանողները՝ բաց կապուտ. Նոյն իսկ շներին և ձիերին աղդ երկու գոնեներով են զարդարում՝ նաև թէ որ կողմին են պատկանում սրանք. Տեմզա գետի երկու ափերը ծածկւած են հազարաւոր ամբոխով. լաղթութիւնը որ, ի դէպ ասած, շատ փառաւոր էր և որի նմանը 43 տարուց հետէ տեղի չէր ունեցել. տարան Օկսֆորդի համալսարանականները, որոնք լիշեալ տարածութիւնը թիաւոր նաւակով կարեցին 19 րոպէ 21 վալորկեանում:

Մարմնամարզական մաշերը (matche) կաւանում են զանազան մըրցումների մէջ՝ ցատկելու և փախչելու Օկսֆորդի մի ուսանող մի չը տեսնը. ամսէ և չը լսւած թուիչք արեց, որի երկանութիւնը հաւասար է 23 ուսա-

<sup>1)</sup> Ներկաւ կուրսով 1 ֆունտ ստերլինգը արժէ 9 ռուբլի 50 կ. թըզ-թաղրամ.

<sup>2)</sup> Անգլիական մղոն=1.609 մնար:

չափին և 5 մատնաշափին, Նեմբրիջի ուսանողներից կալին աշխափիսիները, որոնք 1/4 մղոն վազելու համար գործադրեցին 49<sup>4/5</sup> վալոկեան, իսկ ամբողջ մի մղոնի համար գործադրել են 4 րոպէ 2<sup>1/2</sup> վալոկեան:

Մի նոր անգլիական գիրք Դիկենսի մասին պարտճակում է իւր մէջ նաև հետեւեալ անցքի պատմութիւնը:

Նըսելի անգլիացի վլապասանը, (որի բազմահատոր թարգմանաւթիւններից - ամօթով խոսառվանած - և ոչ մէկը չունինք հակերս) մասնակից էր մի անգամ մի կրիկետ խաղի, մի խաղ որ շատ սիրւած և տարածւած է Անգլիայում. երբ լանկարծ հանդիսականների շարքերը ճեղքում է մի հակա պինուրական, մօտենում Դիկենսին և ասում. կարող եմ ես նակել Զեղ վրա, պարոն, - ի հարկէ, պատախանում է կարմրելով վլապասանը. Զինուրականը նալում է վրան ուշադրութեամբ բռապէաչափ այնուետե կանգ առնում, զինուրական պատիւ տալիս և հեռանում ասելով. Ասուած Զեղ օրհնէ, պարոն:

Մալիս 11 Լոնդոնում կալացած աղջավին բանաստեղծութեան ընկերութեան ժողովին - պրոֆեսոր Մինաս Գերազ հազորդեց մի քանի անտիպ հայ հեքիաթներ և աւանդութիւններ. Ներկայ Փոլկուրիստներին շատ դուր եկաւ Barogh Assadour'ի<sup>1)</sup> մասին հայ հեքիաթը և նրանք միաբերան վկանցին, որ դա գերազանցում է իրանց բոլոր ծանօթ թէ Արմելքի և թէ Արմետքի, հեքիաթներից:

Ներկայ դանւող հանդիսականներից մէկը պ. Գ. Յակոբեանը նմանապէս պատմեց մի հայ հեքիաթ՝ մահմդականութիւն ընդունելով մերժող մի հրեափի մասին:

Պր. Զերագի դասախոսութիւնն արժանացաւ բոլոր ներկակ եղած հասարակութեան հրապարակական շնորհակալութեան:

—Լոնդոնի լեգալիտատական ընկերութիւնը մի ժողով է ունեցել մայս 13 University College'ում, Դասախոսում էր հայ հասարակութեան լաւ ծանօթ հակադէտ պ. Գ. Շոռումպիլ՝ նիւթ ունենալով 1) հալոց բառբառների և սոցա գրականութեան մասին, 2) հայ լեզվի քերականական կազմակերպութեան մասին և վերջապէս 3) հայ լեզվ գիրքի մասին համեմատական լեզվագիտութեան մէջ.

Յարգելի պրոֆեսորը, հիմնելով նորագոյն հետազոտութիւնների վրա՝ դասում է հալոց լեզուն արիական եւրոպական լեզուների շարքում, ան է իրանական և սլաւ-լիթովական լեզուների մէջտեղում, իւր դասախոսութեան միջոցին լարգելի քրանսիացի պրոֆեսորը մի քանի ակնարկութիւններ արեց հակերի ներկայ քաղաքական դրութեան մասին, Պրոֆեսոր Շոռումպիլը

<sup>1)</sup> Ախալ տառապարձութեան հետեւում է և պ. Մ. Զերազ. Barogh Assadour պիտի նշանակի՝ պարող Աստուրը:

միակ օտար հայագէտն է, որ ուսումնասիրում է միաժամանակ թէ հակերէն զրաբառը և թէ աշխարհաբառը,

Ապա պ. Մ. Չերազ մի որոշ գաղափար տալու համար արևմտեան հայ չեղուի արտասանութեան մասին, մի ընթերցանութիւն է անում և ինուն հավերէն մի ճառ արտասանում, որի մէջ զովում է պ. Շոռումդֆի ուսում նախանութիւնը՝ համեստութեան հետ միաժամանակ, գանդատում է անդ լիացիների հակերէն լիզով չը հետաքրքրուելու մասին և ապա առաջարկում է Ընկերութեանը՝ տպագրել պ. Շոռումդֆի դասախոսութիւնը, որ և ընդունում է միաձախն. Մի ուրիշ հակ հակերէն ճառից լիտու—ժողովը ցրում է ուրախ որսով.

3.